«Վիսաեջայդ». 7. Սեպտեմբեր 1979թ.

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

ԲՆՈՐԴԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ԱՇՏԱՐԻՏ ՀՈԳԵԲԱՆԸ

Մնվել է 1937-ին, Երևանում: 1959 թվականին, երբ 22 տարեկան էր, Երիտասարդական համաշխարհային ցուցահանդեսում (Վիեննա) նրա «Ուսանողուհին» գծանկարը շահեց բronզե մեդալ, 1965-ին հանրապետական Երիտասարդական ցուցահանդեսում «Մայրություն» և «Երիտասարդություն» գեղանկարների համար Ռուդոլֆ Խաչատրյանն արժանացավ արծաթե մեդալի, իսկ 1970 թվականին, Կոմիտասի 100-մյակին նվիրված ցուցահանդեսում նկարչի «Կոմիտաս» աշխատանքին շնորհվեց առաջին մրցանակ:

1978 թվականին Ռ. Խաչատրյանը արժանացավ հանրապետության վաստակավոր նկարչի կոչման: Նույն տարվա նոյեմբերին Մոսկվայում բացվեց նրա առաջին անհատական ցուցահանդեսը: Այդ տարի Ռուդոլֆը անհատական ցուցահանդեսներ է բացել Լենինգրադում և Օդեսայում:

Ռուդոլֆ Խաչատրյանի ինքնատիպությանը տեսանելի էր դեռևս 16--17-ամյա հասակում ստեղծած նրա գծանկարներում ու դրանից 7--8 տարի հետո ստեղծած «Մայրություն» և «Երիտասարդություն» գեղանկարներում, որոնք մինչև այսօր էլ վերատրվում են Մխիթարյան և արտաստամբյան դպրոցական հանդիսանների շարվիկներին: Խաչատրյանի գեղանկարչական գործերի հաջողությունը նրան չստացրեցին գծանկարից: Նա շուտով հրաժարվեց գույնից, հրաժարվեց լույսը ստվարաժանելուց և ընտրեց այլ ուղի: Նա չանտաց միայն լույսի և գծի միջոցով հասնել գեղանկարչական արտահայտչականության, և ինչպես վկայում են վերջին 6 տարիներին ստեղծված դիմանկարներն ու նատյուրմորտները, այդ ճանապարհն իզուր չանցան: Քիչ է ասել իզուր չանցան, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է փորձառու մատիտանկարներին: Այս շարքի դիմանկարներում ու նատյուրմորտներում նկարիչը հասել է մարի ու գծաժուանների այն աստիճան խուզման, որ ձևերով իրագործած պատկերները գիտակի մեջ հարուցում են անմիջականի ու բառերով չնկարագրվող զգացումներ: «Զորացած ծաղիկներով նատյուրմորտ», «Կանացի դիմանկարս, ԵՄ կնոջ դիմանկարս», «Մայրամ», «Հուդիթ», «Իրենանկարս և ուրիշ աշխատանքներ գիտակին համակում են գրեթե նույն զգացումներով, ինչ զգացումներով ստիպում է առաջին անգամ սիրահարված պատանին՝ սիրած էակի հայացքին հանդիպելիս: Ռուդոլֆի պատկերներ կարող է առնչվել միայն կյանքը, բնությունը անսահմանորեն սիրող մարդը, միայն նա, ով արյունով է զգում հավիտենական գոյության հրաշքը, ով իրեն չի զատում բնությունից և ապրում է որպես ամբողջականի կենդանի մի մասնիկը: Պատահական չէ, որ Ռուդոլֆի Խաչատրյանը նկարում է միայն բնաբդից: Նա գեղեցիկը չի որոնում մատչելի պատկերներում: Նկարիչը գեղեցիկը տեսնում է իր մեջ և իր շրջապատում: Բնությունն ինքն արդեն գեղեցիկ է: Բայց Խաչատրյանին տրված է ամեն ինչ գեղեցիկ տեսնելու և նույնքան գեղեցկորեն վերստեղծելու երջանկությունը:

Խաչատրյանին հիմնականում զբաղեցնում է դիմանկարի ժանրը, որտեղ և հատկապես զգալի է բնորդին բացահայտելու և կերպավորելու նրա անսպառ կարողությունը:

Յուրաքանչյուր անգամ Ռուդոլֆ Խաչատրյանի նոր ավարտած գործը նայելիս թվում է, թե արդեն անհնար է տուչ գնալը, սակայն նա այս անգամ արդեն ապացուցել է բոլոր հնարավորությունները, որ նրա դիմանկարը կատարելագործվելու տեղ չունի այլևս, բայց հաջորդ աշխատանքով նկարիչը գործնական է ապացուցում, եվ հենց գրանով էլ նա անսահման հզոր է ներշնչում մարդու ներքին հնարավորությունների հանդեպ:

Ինչ էլ նկարում է Խաչատրյանը՝ մարդ, ծաղիկներ, ձուկ, թե այլ բան, միևնույն է, նա ձգտում է բացահայտել ու բոլորին տեսանելի դարձնել բնորդի գեղեցկությունը: Իսկ դա միշտ հաջողվում է, որովհետև արվեստագետը ամեն ինչին վերաբերվում է նույն սիրով:

Երբեմն դիտողին կարող է թվալ, որ նա իդեալականացնում է մարդուն կամ որպես բնորդ բնորոշված ծաղիկն ուշադրությունը: Բայց դա կարող է թվալ միայն նրանց, ովքեր անհասարակ մարդուն և իրերին չեն նայում մեծ սիրով ու հոգատարությամբ:

Խաչատրյանը բնորդին պատկերում է ճշտությամբ ու գրեթե լուսանկարչական հավատարիմությամբ: Սակայն տեսանելի է զարգանում մարդու էությունը, նրա հոգեկան հարստությունն ու ամենաբնորոշ հատկանիշները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Զորացած ծաղիկներով նատյուրմորտ:

Որդուս դիմանկարը: